

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակն իր թիմը համալրելու նպատակով հայտարարում է մրցույթ՝ Գրասենյակի մասնագետի թափուր աշխատատեղի համար: Ստորև ներկայացվում են աշխատանքի պայմանները և աշխատակցին ներկայացվող պահանջները:

<i>Ստորաբաժանման անվանումը</i>	Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ, Ռազմավարության մշակման և ադմինիստրատիվ խումբ
<i>Աշխատատեղի անվանումը</i>	Գրասենյակի մասնագետ
<i>Աշխատանքային օրերը և ժամերը</i>	Երկուշաբթիից ուրբաթ, 09:00-18:00
<i>Հիմնական պարտականությունները</i>	<ul style="list-style-type: none"> • Սպառողների ֆինանսական կրթման ծրագրի հետ կապված աշխատանքների իրականացում, սեմինարների վարում, այցելություններ մարզեր • Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի պաշտոնական կայք-էջի վարում • Սոցիալական կայքերում հրապարակվող տեղեկատվական նյութերի մշակում և ժամանակացույցի կազմում • Տեղեկատվական հոլովակների և ռադիոհոլովակների տեքստերի մշակում և սցենարների կազմում • Օժանդակություն Գրասենյակի կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին • Ընթացիկ ծրագրերի համակարգում • Գրասենյակի կողմից հրապարակվող նյութերի պատրաստում, ստուգում • Այլ ընթացիկ աշխատանքների իրականացում
<i>Նվազագույն պահանջներ</i>	<ul style="list-style-type: none"> • Բարձրագույն մասնագիտական կրթություն • Առնվազն 3 (երեք) տարվա մասնագիտական աշխատանքային փորձ • Լեզուների իմացություն (հայերեն, անգլերեն, ռուսերեն) • Համակարգչային հմտություններ • Արդյունավետ թիմային աշխատանքի և միջանձնային հաղորդակցության հմտություններ

Նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ինքնակենսագրականներն ուղարկել info@fsm.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ վերնագրում նշելով Գրասենյակի մասնագետ: **Խնդրում ենք ինքնակենսագրականներն ուղարկել միայն հայերեն: Այլ լեզուներով ուղարկված ինքնակենսագրականները չեն դիտարկվելու:**

Դիմելու վերջնաժամկետը ա/թ հուլիսի 10-ն է: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060-70-11-11 (ներքին՝ 502) հեռախոսահամարով կամ գրել մեզ info@fsm.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ուշադրություն: Հարցազրույցի կիրավորվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները: